ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2017 թվականի փետրվարի 23-ի նիստի N 8- Լ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2016թ. փետրվարի 4-ի թիվ 138-Ն որոշմամբ հաստատված «Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 54-րդ կետով, և քննարկելով Համալսարանի կողմից իրականացվող վճարովի ծառայությունների՝ ավարտական փաստաթղթերի (դիպլոմ, դիպլոմի հավելված, ակադեմիական տեղեկանք, արխիվային տեղեկանք) տրամադրման և վավերացման համար վճար սահմանելու մասին սակագների ցանկի հաստատման հարցը (զեկուցող՝ պրոռեկտոր Մ. Մելիք-Բախշյան),

Համալսարանի գիտական խորհուրդը որոշում է.

հաստատել Համալսարանի կողմից իրականացվող վճարովի ծառայությունների՝ ավարտական փաստաթղթերի (դիպլոմ, դիպլոմի հավելված, ակադեմիական տեղեկանք, արխիվային տեղեկանք) տրամադրման և վավերացման համար վճարելու սակագների ցանկը՝ համաձայն հավելվածի:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ռուբեն Միրզախանյան**

Հ ա վ ե լ վ ա ծ
ՀՊՄՀ Գիտական խորհրդի

2017 թվականի փետրվարի 23-ի նիստի N 8- Լ որոշման

Ց Ա Ն Կ

ՎՃԱՐՈՎԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՍԱԿԱԳՆԵՐԻ

1. Կորցրած ավարտական փաստաթղթի (դիպլոմ) և/կամ անվան փոփոխման դեպքում ավարտական փաստաթուղթ (դիպլոմ) տրամադրելու համար սահամնել վճար՝ 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ, իսկ ավարտական փաստաթղթի (դիպլոմ) կազմի համար՝ 3000 (երեք հազար) ՀՀ դրամ:
2. Կորցրած ավարտական փաստաթղթի (դիպլոմ) հավելվածի և/կամ անվան փոփոխման դեպքում ավարտական փաստաթղթի (դիպլոմ) հավելված տրամադրելու համար սահմանել վճար՝ 2000 (երկու հազար) ՀՀ դրամ:
3. Կորցրած և/կամ անվան փոփոխման դեպքում ակադեմիական տեղեկանքի և նախկին նմուշի դիպլոմի հավելավածի տրամադրման համար սահմանել վճար՝ 2000 (երկու հազար) ՀՀ դրամ:
4. Ավարտական փաստաթղթերի (դիպլոմ, դիպլոմի հավելված, ակադեմիական տեղեկանք, արխիվային տեղեկանք) վավերացման համար սահմանել վճար՝ 3000-ական (երեք հազար) ՀՀ դրամ:

   Վերոնշյալ տեղեկանքների շարքին չեն դասվում՝

   ա/ դիպլոմների իսկությունը և ուսման տարիների վերաբերյալ փաստերը հաստատող տեղեկանքները,

   բ/ անձնական գործերում բացակայող դիպլոմների հավելվածների տրամադրումը:
5. Այլ բուհերի և կազմակերպությունների ասպիրանտների և հայցորդների՝

   ա/ ատենախոսության թեմայի հաստատման համար սահմանել վճար՝ 25.000 (քսանհինգ հազար) ՀՀ դրամ.

   բ/ առաջատար կազմակերպության եզարակացության համար սահմանել վճար՝ թեկնածուական ատենախոսության համար 35.000 (երեսունհինգ հազար), դոկտորական ատենախոսության համար՝ 60.000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ,

   գ/ նախապաշտպանության կազմակերպման և ատենախոսական աշխատանքի եզրակացության ձևակերպման համար (յուրաքանչյուր անգամ) սահմանել վճար՝ թեկնածուական ատենախոսության համար 40.000 (քառասուն հազար), դոկտորական ատենախոսության համար՝ 60.000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ: